

պիտի բերեն Պաղեստինացի և Կեսարիա նահատակուած վկայի մը՝ Ս. Պրոկոպիոսի եկեղեցին, որ շինուած էր 484ին Ջենոն կայսրէն նոյն քաղաքին մէջ և կը յիշատակուի Chronicon Pascale գիրքին մէջ (Տէ՛ս Հտր. Ա. էջ 604): Նոյն նահատակին անուամբ Երուսաղէմի մէջ ալ կը գտնուէր եկեղեցի մը՝ զոր կը յիշատակէ մեր Գրիգոր Արծրունեան եպիսկոպոս՝ Տեառնընդառաջի շփոթներու առթիւ Հայաստան գրած իր նամակին մէջ (Տէ՛ս Ճառընթիւր): Կեսարիա քաղաքէն դուրս ալ կը գտնուէր Ս. Առաքելոց անուամբ եկեղեցի մը (Տէ՛ս Patrologia Orientalis, Հտր. Ը. պրակ 1):

Յուսով ենք թէ նոր պեղումներ և հետազոտութիւններ երևան պիտի բերեն նոր սրբավայրեր, և թերևս նաև հայկական յիշատակարաններ:

